ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Բնագիտականառարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի մայիսի 29-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբիղեկավարի զեկուցում:
3. Հաշվետվությունների նոր ձևաչափի ներկայացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
4. Առարկայական ծրագրերի կատարողականի քննարկում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
5. Թեմատիկ պլաններում օրվա դասի նպատակի և վերջնարդյունքի վերանայում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
6. 9-րդ դասարանում «Բնագիտություն» առարկայից «Օրգան համակարգեր» և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով իրականացված նախագծային աշխատանքների արդյունքների քննարկում (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ իրականացվել է բացակայությունների վերահսկումը, արձանագրելով, որ տարեկան 200 ժամի գերազացման դեպքեր չեն եղել: «Դրամ» թեմայի շրջանակում իրականացված գործնական դասը խանութում՝ Կարեն Գիժլարյանի կողմից՝ աշակերտների մոտ առաջացրել է մեծ ոգևորություն: «Թիվ, թվանշան» թեմայով ամփոփիչ դասը, որն անցկացվել է Անահիտ Անդրեասյանի կողմից եղել է ուսուցողական և արդյունավետ: 6-րդ դասարանի սովորողների էքսկուրսիան բնության գրկում՝ Անահիտ Անդրեասյանի ուղեկցությաբ նրանց մոտ ձևավորել է դիտելու, համեմատելու և բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք դրսևորելու կարողություն: Իրականացվել է ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները,լ ացվել են արձանագրության 4-րդ ձևերը: 9-րդ դասարանում «Բնագիտություն» առարկայից «Օրգան համակարգեր» թմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով իրականացված նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվությունները ներկայացվել են տնօրենին, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) տեղադրվել է էլեկտրոնային կառավարման և դասավանդման պաշարների շտեմարանում:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց հաշվետվությունների լրամշակված ձևաչափը՝ նշելով դրա կառուցվածքը, լրացման կարգը, ներկայացվող տեղեկատվական պահանջները: Այն ներառում է մանկավարժի կատարած աշխատանքները, ձեռքբերումները, կիրառված մեթոդները, բացահայտում է հաջողություններն ու դժվրությունները:

Լսեցին՝

4. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով, որ ուսումնական տարվա ընթացքում ծրագրային նյութը իրականացվել է ըստ թեմատիկ պլանների: Նշվեց, որ տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ այն դասարաններում, որտեղ պահուստային ժամերը բավարար չեն եղել՝ իրականացվել է թեմաների խտացում:

Լսեցին՝

5. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց, որ թեմատիկ պլաններում պետք է վերանայել օրվա դասի նպատակները և վերջնարդյունքները: Դասերը ավելի նպատակային և վերջնարդյունքները տեսնելի դարձնելու նպատակով:

Լսեցին՝

6. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը նշեց, որ «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Օրգան համակարգեր» թեմայով. և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով իրականացված նախագծային աշխատանքները հաջողված էին և ստացված վերջնարդյունքները կօգտագործվեն, որպես օժանդակ ուսումնական նյութեր:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի մայիսի 29-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել Մ/մ ղեկավար Ա. Սահակյանի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ կատարվել է ԱՈւՊ-ներում սահմանած նպատակների վերլուծություն՝ հետագա աշխատանքները պլանավորելու նպատակով: Կատարվել է բացակայությունների վերահսկում և արձանագրվել է, որ թույլատրելի շեմը գերազանցող սովորողներ չկան: Իրականացվել են նախատեսված գործնական և ամփոփիչ դասերը, էքսկուրսիաները, ինչպես նաև ներկայացվել են նախագծերի հաշվետվություններն ու արդյունքները: Իրականացված աշխատանքները գնահատել բավարար:
3. Ի գիտություն ընդունել հաշվետվությունների նոր ձևաչափի վերաբերյալ տեղեկատվությունը և սահմանված ժամկետում ներկայացնել այն:
4. Առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ ծրագրային նյութը իրականացվել է ըստ թեմատիկ պլանների, տոնական և ոչ աշխատանքային օրերի

պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ անհրաժեշտության դեպքում թեմաների խտացման միջոցով:

5. Կատարել աշխատանքի բաժանում և բնագիտական առարկաների թեմատիկ պլանները բերել պատշաճ տեսքի և բովանդակության՝ հստակ ձևակերպելով օրվա դասի նպատակ և վերջնարդյունք:
6. «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Օրգան համակարգեր» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով իրականացված նախագծային աշխատանքները համարել արդյունավետ:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ա.Սահակյան**

Քարտուղար՝ **Ա.Խուբլարյան**

03.06.2026